Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

19 հունիսի 2014 թվականի N 26

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի ՆԻՍՏԻ N 25 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԿԵՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի նիստի N 25 արձանագրության 6-րդ կետով հավանության արժանացած «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի վերականգնման աշխատանքների 2013-2015 թվականների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագրերում «2013-2015» թվերը փոխարինել «2015-2017» թվերով.

2) հավելվածի 4.3-րդ՝ «Ծրագրի ժամկետները» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.3. Ծրագրի ժամկետները՝

Ծրագրում ներառված միջոցառումները նախատեսվում է իրականացնել 2015-2017 թթ. ժամանակահատվածում՝ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ ստորև նշված ժամանակացույցով՝

NN ը/կ	Միջոցառումները	Միջոցառումների իրականացման ժամկետը	Միջոցառումների իրականացման շրջանակներում կատարվող աշխատանքների ծավալը
1.	Արգելավայրի տարածքի հազվագյուտ, անհետացող, էնդեմիկ բուսատեսակների գույքագրում և նշագրված ցուցակների կազմում	2015 թ.	x

2.	Արգելավայրի տարածքի քարտեզագրում և բուսատեսակների կադաստրի ստեղծում	2015 թ.	95.99 հա
3.	Խնամքի, մշակման, պաշտպանական, պահպանության և այլ անհրաժեշտ աշխատանքների համար տրանսպորտային միջոցի ձեռքբերում	2015 թ.	մինի տրակտոր՝ 1 հատ ավտոմեքենա՝ 1 հատ
4.	Ջուզգունի բնական վերաճն ապահովելու նպատակով խնամքի և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում	2015 թ.	95.99 հա
5.	Ջուզգունի բուսակներ աճեցնելու նպատակով տնկարանային տնտեսության հիմնում: Տնկարանի տարածքի ցանկապատում	2015 թ.	2 հա 400 մ
6.	Արգելավայրի պահպանման գոտում աճող ջուզգունի բնական վերաճի տնկիներով, ինչպես նաև հիմնադրվող տնկարանում աճեցված տնկիներով արգելավայրի բուսականությունից զուրկ տարածքներում տնկման աշխատանքներ	2015-2017 թթ.	4 հա
7.	Տարածքի ցանկապատում, ինչպես նաև բնական ցանկապատի ստեղծում	2015-2017 թթ.	1.5 կմ
8.	Հակահրդեհային միջոցառումների համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ձեռքբերում	2015 թ.	x
9.	Ցուցապաստառների, ցուցանակների և ուղեցույցների ձեռքբերում և տեղադրում	2015 թ.	50 հատ
10.	Տնակի գնում և տեղադրում	2015 թ.	2 տնակ
11.	Տարածքի ցանկապատում և անասնապահության նպատակով արգելավայրին հարակից արոտավայրերի օգտագործումը չխոչընդոտելու համար անցուղիների առանձնացում	2015-2017 թթ.	0.5 կմ
12.	Արգելավայրի ռեժիմին համապատասխան զբոսաշրջության տարբեր ձևերի կազմակերպում և համապատասխան ենթակառուցվածքի ստեղծում	2016-2017 թթ.	
	ա. «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի մասին ուղեցույցների, բուկլետների և ֆոտոալբոմների պատրաստում և տպագրում	2016 թ.	3 հատ՝ 1000-ական տպաքանակով
	բ. կարճատև հանգստի կազմակերպման նպատակով առանձնացված մասերում հանգստյան գոտիների, համապատասխան տաղավարների, ցուցանակների տեղադրում	2016-2017 թթ.	ցուցանակներ՝ ըստ անհրաժեշտության տաղավարներ՝ 5 հատ
13.	Արգելավայրի տարածքում անտառտնտեսական աշխատանքների իրականացում՝		
	տնկարանի խնամք		2 հա

	ոռոգման ցանցի ընթացիկ նորոգում	2016թ-ից սկսած	10 կմ
	ոռոգման աշխատանքներ		200.0 խմ
	հողի նախապատրաստում		15 հա
	տնկանյութի աճեցում (ջուզգունի բուսակների աճեցում)		20.0 հազ. հատ
14.	Արգելավայրի տարածքում գտնվող «Դամբա-ռանադաշտ» պատմամշակութային հուշար-ձանի անխաթար պահպանությունն ապահո-վելու նպատակով դրա պահպանական գոտու սահմանների առանձնացում հատուկ նշաններով	2015-2017թթ.	

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թ. հունիսի 27
Երևան